



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 14 » հուլիս 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 325-ՂԻ

«ՎԻՋ ԷՅՐ ՄԱԼԹԱ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Մալթա» ավիաընկերության 2023 թվականի հունիսի 22-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Մալթա» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով՝ 2023 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 30-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով չվերթերը համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի N 171-Ա հրամանով տրված

թույլտվության շրջանակներում Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 30-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի N 171-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

7/14/2023

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 240/130723

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 240/130723

TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ "Wizz Air Malta" Limited
Charterer Պատվիրատու	«Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ "Wizz Air Malta" Limited
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239)
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air route	Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ Venice/LIPZ/-Yerevan/UDYZ/-Venice/LIPZ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	03/08/2023 մինչև 30/08/2023 03/08/2023 till 30/08/2023

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՅ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

7/14/2023



14.07.2023

(տալու ամսաթիվը)

(date of issue)